Հումանիտար գիտությունների ֆակուլտետ,
«Հայոց լեզու և գրականություն» մասնագիտություն,
չորրորդ կուրս, Դիանա Բեգլարյան

«Բարություն» թեմայով էսսե

Հպարտ եմ, որ հայ եմ, մի ազգի զավակ, որի անունը բարձր է հնչում տարբեր ազգերի մեջ։ Հայն իր տեսակով բարին քարոզողն է, բարի կամքի պաշտպաններից մեկը։ Հայի բարությունը գեներով է գալիս։ Գուցե այն կախված է ժողովրդի տեսած վիշտ ու տառապանքից, բայց մեկ է՝ հայն ուրիշ սիրտ ունի, հայի բարությունն ուրիշ տեսակ է։ Մեր պատմության քառուղիներում շատ ցավոտ էջեր ունենք՝ սկսած Հայոց մեծ եղեռնից, որն արևմտահայությանը սփռեց համայն աշխարհով, Մեծ հայրենական պատերազմից, 1988 թվականի ավերիչ երկրաշարժից, արցախյան ազատամարտից, ապրիլյան քառօրյա կռիվներից պարզ է դառնում, որ աշխարհի, Հայաստանի ու Արցախի հայերը համախմբվելով կարողացան հայրենիքին սեր ու բարություն նվիրել։ Այն մեծ ավանդը, որ նրանք ունեցան՝ սահմանի պաշտպանության մանակցություն, դրամական աջակցություն սահմանապահ գյուղերին, սննդի մատակարարում զորամասերին, ուղղակի փառավոր հաղթանակ էր, մեծ բարեգործություն հայրենիքին։ Այդ սերն ու նվիրումն օգնեց, որ մեր քաջ տղաները հաղթեն մարտում։ Մտածում եմ ու հասկանում՝ աշխարհին բարություն է պետք, որն էլ կօգնի վերացնել պատերազմ ասվածը։ Պատերազմ սիրող ազգերը բարությունից մղոններով հեռու են, բայց նրանք էլ կարող են փոխվել, երբ հասկանան, որ սատանայական են իրենց բոլոր քայլերը, երբ հասկանան, որ մահվան պատճառ դառնալը հանցանք է։ Բարության խորհուրդն այն քարոզելու մեջ է, ուստի հարկավոր է հաճախ խոսել բարի մարդկանց մասին։

Հիշեցի մի դեպք, որն ինձ ստիպեց գնահատել մարդկանց բարությունը։ Առավոտյան արթնացա վատ զգացողությամբ։ Չնայած դրան՝ պատրաստվեցի ու շտապեցի համալսարան։ Չանցած մի ժամ՝ հայտնեցին պապիկիս հետ կատարված դեպքի մասին։ Հայ-ադրբեջանական սահմանին ականի պայթյունից վիրավորվել էր։ Փառք Աստծո ողջ է մնացել։ Նա այլևս չի կարող օգնել իր գյուղացիներին, չի կարող վարել իր մեքենան, որով ամբոջ գյուղի ձմեռվա վառելիքն էր ապահովում։ Խեղճ

պապիկս զրկվեց և՛ ոտքից, և՛ ձեռքից։ Չեմ մոռանա նրա արցունքները, երբ լացակումած փնտրում էր ձեռքն ու ոտքը, սակայն չէր գտնում։ Փոխարեն ցավից ուշագնաց էր լինում, իսկ երբ կրկին արթնանում էր, ընկնում էր հոգեկան ծանր դրության մեջ։ Երբ թոռներով հավաքվեցինք շուրջը, նա ասաց.

-Լավ է գոնե ձախ ձեռքից եմ զրկվել, կարող եմ ես ինքս հաց ուտել, ջուր խմել և սեղմել բոլոր այն երիտասարդների ձեռքերը, ովքեր ինձ արյուն տվեցին և նրանց շնորհիվ է, որ հիմա ողջ եմ՝ ձեր կողքին։

Մի պահ հետ նայեցի և իմ առջև հիվանդանոցի միջանցքն էր։ Հավաքվել էին մեր բոլոր համագյուղացիները։ Նրանք եկել էին պապիկիս հույս տալու, եկել էին տալու այն արյունը, որ թշնամու ձեռքով պատրաստված ականն էր քամել պապիկիս ոտքից։ Դա մեծ բարություն էր իմ համագյուղացիների կողմից, ովքեր շտապել էին օգնության վիրավոր պապիս։ Մի կողմից էլ բժիշկների ջերմ վերաբերմունքը, որոնք հույս էին տալիս պապիկիս, որ պրոթեզավորումը կօգնի կրկին քայլել։ Ես հպարտ զգացի, որ հայության սրտում շողում է բարության կրակը, չէ՞ որ բարին միշտ էլ հաղթող է։ Այդ մարդկանց շնորհիվ է, որ այսօր պապիկս ու իր ընկերը մոռացության են տվել սպիներն ու անգամ հաշմանդամությունը, որը երբեք անցողիկ չէ։ Ժողովրդի սերն ու բարությունն օգնեց, որ նրանք հաղթահարեն սթրեսն ու սարսափը։ Այնուամենայնիվ, պապիկիս մեքենան կանգնած է իր աղքատիկ ավտոտնակում՝ նեղացած իր դավաճան տիրոջից, որ իրեն մենակ է թողել։ Ա՜խ, եթե հարևան ազերին մի քիչ բարություն ունենար իր սրտում, երբեք պատճառ չէր դառնա ո՛չ պապիիս դեպքի, ո՛չ մեր տասնյակ տղաների մահվան համար։ Ես չեմ կորցնում հույսս, հավատս, որ մի գեղեցիկ օր հենց հայը պետք է մարդ տեսակի միջից հանի չարությունը։ Հայը պիտի սերմանի բարին ու ապացուցի մարդկությանը, որ կյանքի խորհուրդը բարություն անելն է, ոչ թե չկամությունը։ Բարության կարիք ունեն բոլորը՝ անկախ սեռից, ազգությունից և տարիքից։ Շրջապատի մարդկանց նկատմամբ բարի գտնվելով՝ մենք օրինակ ենք ծառայում երեխաների համար, ուրեմն թույլ տանք, որ նոր սերունդը բարությամբ շրջապատված մեծանա։